ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

28.07.2023թ. ԿՆՔՎԱԾ «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-23/26» ԾԱԾԿԱԳՐՈՎ «ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿՐԱԿՄԱՐԻՉՆԵՐԻ ՎԵՐԱԼԻՑՔԱՎՈՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «25» 08 2023թ.

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը, ի դեմս գլխավոր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Կարեն Հովհաննիսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Պոժմաստեր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, ի դեմս տնօրեն Լիդա Սարգսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից (երկուսը միասին այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով Կողմերի միջև 28.07.2023թ. կնքված N «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-23/26» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.6 կետերով և հիմք ընդունելով «Պոժմաստեր» ՍՊ ընկերության կողմից 18.08.2023թ. ներկայացված գրությունը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Պայմանագրով սահմանված ծառայությունների մատուցման ժամկետը երկարաձգել 30 օրացուցային օրով և Պայմանագրի կատարման վերջնաժամկետ սահմանել 26.09.2023թ.:

2. Այլ պայմաններ

2.1. Պայմանագրի մյուս կետերը մնում են անփոփոխ:

2.2 Սույն համաձայնագիրը կազմված է 2 (երկու) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և տրվում են Կողմերին:

2.3 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ	«Պոժմաստեր» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Զ. Անդրանիկի 1	ՀՀ, ք. Երևան, Մանթաշյան 12 շ., 24
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Մալաթիա մ/ճ	«ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 1150001172630300	Հ/Հ 1660019150980100
ՀՎՀՀ 01522459	ՀՎՀՀ 02265669
Գլխավոր տնօրենի	Տնօրեն
ժամանակավոր պաշտոնակատար	
---------- Կ. Հովհաննիսյան	---------- Լ. Սարգսյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ.	Կ.Տ.